

նուր» բացատրութիւնը կը թուի ցոյց տալ թէ շինու-
թիւնը այն ատեն շատ հին էր:

Այս գեղեցիկ գետնադամբանը շինելու փառքը ու-
ր՞ուհն կը վերաբերի, չեն գիտեր: Այն հնախօսները որ
Օմարի մզկիթին ամբողջ շրջափակին մէջ կը տեսնեն
Հերովդէսի մէկ գործը, վասն զի ամէն տեղ կը տես-
նուի միեւնոյն գործը, հեշտեալ այս թագաւորին կը
վերագրեն Հարամ էլ Սալիլի շինութիւնը: Ծանօթ են
այն պատճառները որ Հերովդէսը մզեցին Երուսաղէմի
Տաճարը վերաշինելու. բայց չգիտցուիր թէ ի՞նչ շահ
ունէր այս Եդովմիացին՝ աւելի հեթանոս քան թէ հը-
րեայ, շինելու համար այնքան գեղեցիկ գործ մը
Քերքոնի մէջ: Այս պարագային Յովսէպոս՝ զա՞նց ը-
րած էր արդեօք այդպիսի գործի մը հեղինակին ա-
նունը յիշատակելու, երբ սակայն, ամէն տեղ ճոռու-
մաբանութեամբ կը խօսի իրեն գրեթէ ժամանակակից
Հերովդէսի ձեռնարկներու մասին:

Ուրիշ հնախօսներ չեն մոռնար թէ մեծ շինուա-
ծանիւթերով, զարդարանքներով և յաւելուածներով
այս շինութիւնը աւանդական բան մըն էր Փիւնիկէի
և Սիւրիոյ մէջ Հերովդէսէն շատ առաջ: Այս պարա-
գային՝ Երուսաղէմի Հարամին հարաւային արեւմուտ-
եան անկիւնը շինողները մեծ դիւրութիւն ունէին նը-
մանելու իրենց նախնեաց շինարարութեան ձևերուն,
անյարմարութիւններէ խոյս տալու համար: Այս պատ-
ճառաւ է որ այս հնախօսները Քերքոնի Հարամը կը
վերագրեն Հրէաստանի թագաւորներուն, կամ Ռոբո-
վամին՝ քաղաքին ամբողջիւնները շինողին, կամ Սո-
ղոմոնին կամ նոյն իսկ Դաւիթին: Նարուզոգոնոսորի
ժամանակ, Քերքոն եդովմական քաղաք մը եղած է,